# ԼՐՈՅ ԳԻՐ
## ՄԵԾԻ ՏԷՐՈՒԹԵԱՆՆ ՕՍՄԱՆԵԱՆ

ՅԱՄԻ ՏԵԱՌՆ 1840 — ՄԱՐՏԻ 14 — ՈՐԼ 1256 — ՄՈՒՀԱՐՐԷՄԻ 23

ՆՈՒՄԵՐԱ 6


## ԳՈՐԾՔ ՆԵՐՔԻՆ

Արտարուբէ վճռայ ծաղւըլյն (ֆի Մէճլիսի ահքեամ ադլիյէին) նողմանէ՝ ինքնաշալէն խըրըրըլված գըրէին վէրէ նոզմը դըրված արքայական խատդէ հէմայունէին օրինակն է։

Ներքսդրեալ գիրը կարդացի և իմաստը հասկըցայ, որ տէրութենս և ազգս ծաղկեցընելու մի միայն ճամբայ եղած օգտակար կարգադրութեանց վրայ՝ բոլորն ալ ջանք և փափագ ունենալը կրկին յայտնըվելով, իմ ալ կատարեալ ուրախութեանս պատճառ եղաւ։

Եւ որովհետև այս անգամին դըրված կարգադրութիւը հաստատ բռնըվելուն համար՝ միշտ դուրսերուն որպիսութիւը քննել, թէ աղէկ ծառայութի և ջանք ընողին՝ և թէ հակառակը գործողին փոխարէնը հատուցանել՝ խիստ հարկաւոր ըլլալով, ասոր վրայ ալ քննութիւն ըլլըվելը լաւ մտածերէք, և կարգադրեալ զօրաց ալ յառաջ [illegible] նութեէ ամէնակարողին ասոր ալ կատարումը տըրվելով՝ աստուծմէ յոյս ունիմ, որ ասոնց հաստատութիւնը ամէնուն օգուտին պատճառ կըլլայ։

Ասոր մէկ տարվան մէջը կատարվելու բարի կանոննեերուն վրայօք ուրախութիս՝ և թէ առաջիկայ տարիս ալ հաստատվելու բարեկարգութեեց վրայ ունեցած արքայական կամքս ամէնուն իմացընելու համար, ամէն տարեգըլուխ սովորութիւն ընելով՝ վճռոց ժողովը գալու միտք ունիմ։ Աստուած բարձրեալն տծ ամէնուն գործոցը բարի յաջողութիւն շնորհէ, ամէն։

---

### Արտաշին խըրըրըլված գըրէին օրինակն է։

Անական եղած քաղցր և գթած բարուցդ հարկաւորութենէն՝ անցեալ կիրակի օրը ժողովոյն մէջը գալովդ՝ ամէնուն փառք և պարծանք ստանալուն, և բարեկարգութեը համար կարգացված խաղդի հիւմայունիդ մէջը գըրված արքայական ուրախութեամբդ և տըրված պատվէրներովդ բոլոր ծառաներուդ վերստին ջանք և փափագ ունենալուն պատճառ եղաք։ Աստուած կըխնդրեմք որ բարձրեալն տծ՝ կենացդ երկարութի պարգևէ։

Կիւլխանէն կարգացված խաղդի հիւմայունովըդ հաստատուածութեը ապահովութի շնորհեցիք. որ ամէն հարկաւոր գործքերուն հիմը և արմատը ըլլալով, այս վճռոց ժողովոյն հարցմունքն ալ համարձակութի մը և պէտք եղած կարգադրութիւնը առացեր է։ Թէ մինչև հիմա և թէ այսուհետև ալ պատահած գործքերուն վրայ ուղիղ դատաստանաւ քննութիւն ընելը՝ և մեր մէջը ունեցած միաբանութիւնը հաստատ պահելը՝ մեր ծառայական պարտքն է։

Գիտութի ող տէրութեդ հովանաւորութէ ներքևը եղած թէ քաղաքներուն արդիւնքը և ուրիշ գործքերը կարգադրող խորհրդարանները, և թէ դատաւորներուն բաւական ամսականներ կապվիլը՝ կարգի դըրվելով, բոլոր ժողովուրդը ուրախութիւն ընելու սկսեր են։

Ասոր այսպիսի կարգադրութիւները օր ըստ օրէ յառաջ երթալով՝ և ուրիշ գործերուն ալ բոլորով սրտիւ նայվելով՝ վերստին ուրախութի ստանալուդ պատճառ կըլլայ. մանաւանդ որ դիտաւորութիդ բարի բաներու վրայ եղած ըլլալով, ամէնէն այսուհետև զրկողութեան (ֆի զուլում) նշան մը չըմնալուն՝ և բոլորովին արդարութիւնը տիրելուն աստուծմէ յոյս ունիմք։

Բայց դուրսերն ալ այս նոր կարգադրութիւները հաստատութիւն բռնելուն համար՝ հանապազ ծածուկ և յայտնի կերպով հարկաւոր եղած քննութիւներ ըլլալուն կատարումը այս օրերը տըրվելէն յետոյ՝ կըխնդրեմք որ արքայական հրամանաւըդ գործի դըրվելուն թոյլտուութի շնորհէք. և կը յուսամք աստուծմէ որ այսուհետև թագաւորութեանդ ամէն մէկ օգտակար գործքերը կարգի կը դրուին։

Եւ ուրիշ տէրութիւններուն կողմանէ հզօր տէրութեդ հետը եղած և մեր անկեղծութեը համեմատ դրանըված՝ բարեկամական ազդարարութիւններն ալ՝ այս ձեր ծառաներուն ուրախութեանը պատճառ եղած է։

Եւ դըրված կանոններուն հակառակը գործողին՝ բոպէ մը չանցընելով պէտք եղած պատիժը տըրվելուն համար՝ պատժոց կանոնագիրքն ալ քանի մը օրէն մեծի տէրութեանդ կըմատուցանեմք։

Ասոր Կիւլխանէն կարգացված հրամանագրիդ մէջը գըրվածին պէս՝ կարգադրեալ զօրաց յառաջ ժամանակ դնելը յիրաւի շատ հարկաւոր ըլլալով՝ Սէրասքէրին դըրանը խորհրդարանին մէջը խորին մտածմունքներով մինչև ցայժմ կըքըննըվի, որ աստուծով կատարումը տըրվելու ըլլայնէ՝ թէ զօրաց և թէ հպատակաց շատ օգուտ և դիւրութիւն կըլլայ։

Սատըրազամ, Շէյխիւլսլամ. Սէրասքէր փաշայն.
վճռոց ժողովոյն գլխաւոր Րէուֆ փաշայն.
Թիճարէթ Նազըրի Ահմէտ Ֆէթհի փաշայն.
Սաիտ գափտան փաշայն.
Խարիճիյէ Նազըրի Րէշիտ փաշայն.
մալիյէ միւշիրի Րիզա փաշայն։

Նախարարներէն

Մըստէշար պէյ էֆէնտին.
էմին պէյլիքճի Մըստէշար դատիր պէյ էֆէնտին.
Արիֆ պէյ էֆէնտին.
վէգայի գրող Մէհէմմէտ էսատ էֆէնտին.
Մէհէմմէտ րաֆի էֆէնտին։

Եպարքոսին միւսթէշարը Սաիտ միւհիպ էֆէնտին.
մալիյէ Նազըրի հաճի Սաիպ էֆէնտին.
ալքունի գանձարանին տէֆթէրտար Մուսա սաֆվէթի էֆէնտին.
ալքունի գանձարանին Նազըր Ջիվէր էֆէնտին.

Պոլոտէ սուլդանին քէհեան Դաւհիր պէյ էֆէնտին ․
տիվանի տաավի նազըրի հաճի Նէճիպ էֆէնտին ․
ֆէրիգներէն սինուպի մուհաֆըզ Հիւսէյին փաշայն ․
մուհիմմաթի հարպիյէ նազըրի Արիֆ պէյ էֆէնտին ․
արքունի էվգաֆին նազըր Մէհէմմէտ շէվգի էֆէնտին ․
կարգադրեալ զօրաց մուսթէշար Էտհէմ պէյ էֆէնտին ․
խարիճիյէ նազըրին մուսթէշար Րիֆաթ պէյ էֆէնտին ․
պահրիյէի մուսթէշար Մազլըմ պէյ էֆէնտին ․
Թիճարէթի մուսթէշար Էնվէրի էֆէնտին։

Խօղովոյն անդամներէն

Էտհէմ էֆէնտին ․ Նաֆի էֆէնտին ․
Փախրի էֆէնտին , Աղըֆ պէյ էֆէնտին ․
Րաիֆ էֆէնտին , Արիֆ էֆէնտին․
Տիվանի Թէշրիֆաթճի Սալիս պէյ էֆէնտին ․
տիվանի ամէտճի Նիւման մահիր պէյ էֆէնտին ․
Եպարքոսին մէքթուպճի Իսմայիլ զիւհտի պէյ էֆէնտին ․
տախրիրէի գրագիր Հէհապ էֆէնտին ․
խարիճիյէի գրագիր Հէվքէթ պէյ էֆէնտին ․
տիվանի Թարգմանիչ Ալի էֆէնտին ․
տիվանի տաավի նազըրին առաջին ընկեր (ըմ մուավին)
Իսմայիլ էֆէնտին ․
տիվանի պէյլիկճի վէքիլը Միւմթազ էֆէնտին ․
մէճլիսին առաջին գրագիր Նասիր էֆէնտին ․
Երկրորդ գրագիր Միւհսին էֆէնտին ․
ամէտի գլխաւորներէն Թէվֆիգ պէյ էֆէնտին ․
Մուստաֆա սամի էֆէնտին։

—•○◯○•—

[illegible] և Թէ որդի ծնած ժամանակը գիշերները կանԹեղ վառելով ուրախուԹիւն ընելը․ և երբ մեր Ինքնակալը իր հայրենի գահը ժառանգելով նստաւ , նոյն սովորուԹիւը վերնալու հրաման բրաւ։

Բայց այժմ Արքային որդի ծնանելու ժամանակը մօտ ըլլալով և բոլոր հասարակուԹիւը այս կատարեալ ուրախուԹեանը սպասելուն համար , այն առաջին սովորուԹեանը պէս՝ ուղղիները իր տանը և կամ եալըյին առջին կանԹեղ վառելով ուրախուԹիւն և հանդէս ընելու Ինքնակալէն հրաման առնըվէր է․

Ասոր մեծապօր Արքային գԹած և խնամածու բարուցը հարկաւորուԹենէն՝ զաւակ ծնած ժամանակն ալ իր հպատակներուն սիրտը ուրախացընելու համար Թոյլտուուիւն շնորհելուն գոհ ըլլալու է․ Աստուած բարձրեալն ած երջանիկ կենացը երկարուԹի շնորհելով՝ կերպ կերպ ցնծուԹեամբ սիրտը միշտ ուրախ պահէ , ամէն։

—•○◯○•—

Ինկիլթէռայի տէրուԹէը հետ եղած բարեկամական կապը ամրցը[illegible]լու դիտաւորուԹեը՝ Օսմանեան հզօր տէրուԹէ կողմ[illegible]է երևելի նախարարներէն՝ ուսումի խարիճիյէ նազըրի մեծարու Մուստաֆա րեշիտ փաշան՝ մեծ դեսպանուԹէ յառաջմանէ Լօնտրա խըրկըված էր․ բայց երբոր մեր բարեբաղդ Արքայն իր Թագաւորական գահը ժառանգեց , Րեշիտ փաշայն ուրիշ նախարարներու նման՝ իր օրինաւոր հպատակուԹիւնը արքային յայտնի ընելու , և յետոյ կրկին իրեն պաշտօնատարուԹէ տեղը դառնալու համար՝ արքունի դռնէն հրաման առած և արքայանիստ քաղաքը դարձած եկած էր։

Ու այժմեան Ինկիլթէռայի տիրող ԹագուհիԻն՝ ինքը ուրիշի հետ պսակվելու հարսանիքի պատրաստուի տեսնալուն համար , և ինչպէս վերը յիշեցինք Օսմանեան մեծ-

տէրուԹիւնը՝ Ինկիլթէռայի տէրուԹէը հետ կատարեալ բարեկամուԹի ունենալով՝ Թագուհիին այս պսակին հանդէսին ալ յատուկ դեսպանով շնորհաւորել հարկ եղաւ։

Բայց վերյիշեալ Րեշիտ փաշայն տէրուԹէ մեծամեծ գործքերու վրայ հիմա զբաղված ըլլալուն համար՝ Թագաւորական նախարարներէն պէյլիկճի Մէհէմմէտ շէքիպ էֆէնտին խոհեմ և ուրիշ տէրուԹեանց փօլիթիգային ծանօթ ըլլալով , խարիճիյէ մուսթէշարի աստիճանաւ մեծ դեսպանուԹէ Լօնտրա երԹալու , և մուԹէրճիմ Մէհէմմէտ ֆիւատ էֆէնտին ալ անոր հետ սըր քեաԹիպուԹէ գնալու ընտրըվեցան․ և Շէքիպ էֆէնտին իր աստիճանին յատկացեալ վըլըյանԹի նշանը առնելէն՝ և Թագաւորին դէմը ներկայանալէն յետոյ , այս մուհարրէմի ամսոյն տասն և հինգերրորդ հինգշաբԹի օրը նաւը հեծած գացած են։

Նաւամէտի խալէֆ գլխաւորներէն Միւմթազ էֆէնտին հրամանաւ Արքային պէյլիկճի վէքիլը ընտրըվելով , Շէքիպ էֆէնտիին յառաջմանէ ունեցած երկրորդ աստիճանին յատկացեալ իֆթիխար նշանը տըրվէր է։

—•○◯○•—

Դարապուլուսի կողմը գտնըված կարգադրեալ զինուորներուն վերակացուները՝ սպստամբ արաբներուն հետը մարտընչելով յաղԹեր են անոնց , և Դարապուլուսի գաւառապետ Աշգար փաշայն նոյն պատահմունքը այս կողմը իմացընելով , յիշեալ վերակացուներուն ունեցած աստիճանին փոխվելուն և մեծ աստիճաններ շնորհվելուն համար՝ Արքայէն հրաման եղեր է։

Ասոր վերյիշեալ Աշգար փաշային ալ՝ որ իրեն ընական եղած քաջուԹէը ունեցած զինուորները յորդորե-
[illegible]
մանաւը միւշիրուԹէ աստիճանը տըրվելով , հարկ եղած հրովարտակին (ըմ ֆէրմանին) հետը Եպարքոսին կողմանէ գըրված նամակն ալ խըրկըվէր է։

Առաջին աստիճանը ունեցող զարպխանէի նազըր՝ և Պաղտատին և Մուսուլին խափու քէհեասի Ջիվէր էֆէնտին՝ ուրիշ մեծամեծ գործքերու հետ զբաղվելուն համար՝ նախկին իհԹիսապ նազըրի Իպրահիմ էֆէնտին՝ Ինքնակալին հրամանաւը խափու քէհեասուԹիւնները շնորհ եղեր է։

Հէպէթուլլահ սուլդանին քէհեան հաճի Էյուպ աղայն՝ հրամանաւ Ինքնակալին Մաղնիսայի մուհասըլ ըլլալով՝ անոր տեղը մէկ հաւատարիմ անձ մը դըրվիլը պէտք ըլլալուն համար , արքունի դրանի խափուճի պաշիներէն Խարէսի սանճախին միւսէլլիմ շէրիֆ աղայն՝ Արքային հրամանաւը կոստանդնուպօլիս գալով՝ սուլդանին քէհեա եղեր է։

Արքունի մուԹվախին կառավարիչ Րաղըպ էֆէնտիին՝ անյարմար շարժմունքին համար փոխվիլը հարկաւորեցաւ․ և ԹիւԹիւնի մաքսապետ Շաքիր էֆէնտիին ալ անձը հիւանդ և տկար ըլլալով՝ ԹիւԹիւնի մաքսապետուԹիւնը ուրիշի յանձնըվիլը պէտք եղաւ։

Ասոր Ինքնակալին հրամանաւը իրեն հաւատարիմ և արժանաւոր գտնըվածներէն՝ կարգադրեալ զօրաց նախկին գրագիր Սաափ էֆէնտիին մուԹվախի կառավարչուԹիւնը , և քիրէճխանէի նախկին կառավարիչ Օսման աղային ալ խափուճի պաշիուԹեան աստիճանը տըրվելով՝ ԹիւԹիւնի մաքսապետուԹիւնը շնորհվեցաւ։

Ամէտի օտային մէջը գործակալ գտնըլող Հէվքէթ պէյ էֆէնտին անցեալները ումուրի խարիճիէին գրագիր ընտրըլած ըլլալով, անոր տեղը մէկ ուրիշ մը դնելը հարկ եղեր է. ուստի եպարքոսին մէքթիւպճիներէն և առաջին սընըֆին գըլխաւորներէն՝ տիվանի տապլի նազըրի համի Նէճիպ էֆէնտիին որդին Ճէմիլ պէյը՝ նոյն գործին արժանաւորութիւն ունենալը փորձով յայտնի ըլլալուն համար, Արքային հրամանաւ ամէտի օտային գործակալութիւնը տըրվէլով՝ երրորդ աստիճանին յատկացեալ նշանաւ շնորհվեր է.

Մալիյէ ըսված խալէմին գործակալներուն հին եղանակը փոխելը՝ և հիմակվան նոր կարգադրութեցը համեմատելով կարգի դնելը հարկ ըլլալուն համար, Մալիյէ նազըրին և արքունի գանձարանին տէֆթէրտարը՝ նոր կանոնաւոր կարգադրութեան գիր մը գրելով, ամէն մէկին իրենց գործը՝ յատկացուցեր են։

Վարիտաթի մուհասէպէճիութիւնը՝ յաւաջմանէ տէֆթէրի նազըր Մէհէմմէտ էֆէնտիին, մասարիֆաթի մուհասէպէճիութիւնը՝ յաւաջմանէ մալիյէ մուհասէպէճի Ահմէտ Իզզէթ էֆէնտիին, սէրկեյի մուհասէպէճիութիւնը՝ յաւաջմանէ էսհամի մուհասէպէճի Ապտիւլ գատիր էֆէնտիին, էսհամի մուհասէպէճիութիւնը՝ յաւաջմանէ մուգատտայի մուհասէպէճի Մէհէմմէտ էմին սատըգի էֆէնտիին, տէֆթէրի մուհասէպէճիութիւնը՝ յաւաջմանէ առաջին րուզնամչէ ըսված գործին մէջը գտնըլող Մէհէմմէտ րիձայի էֆէնտիին, մալիյէյի մէքթիւպճիութիւնն ալ՝ երրորդ աստիճան ունեցող Հիւսէյին էֆէնտիին շնորհ ըրեր են։

Եւ այս կարգադրութիւնները ամենևին չավըրվելուն և գործի դըրվելուն համար՝ Ինքնակալէն հրաման ելեր է, և յիշեալ մարդոցը քովը գտնըլող ընկերներուն գործերն ալ ինչպէս որ պէտք են Մալիյէ նազըրին և տէֆթէրտարին կողմանէ կարգի դըրվեր են։

Բոսնայի մուհաֆըզ Եուսուֆ փաշային՝ իր պաշտօնատարութեան կողմը գացած ժամանակը իրեն Ֆէրիգութեան նշանը թէև տըրված էր, ինքը պէյլէր պէյլիութեան աստիճանը ունեցած ըլլալով՝ այն ժամանակը խըրկըված հրովարտակին մէջը պէյլէր պէյիութեան յատկացեալ խորագիրը գըրվեր է։

Լաքին նշանին նայելով մինչև հիմա գացած նամակներուն մէջը Ֆէրիգութեան աստիճանին խորագիրը գրվելուն համար՝ թէ՛ արքայական հրամանագիրներուն մէջը և թէ՛ նամակներուն մէջը ասկէց ետքը ֆէրիգութեան վայլած խորագիրը յիշեալ Եուսուֆ փաշային գըրվելուն՝ Արքայէն հրաման ելաւ։

Իչէլ և Ալայէ սանճաքներուն հրամանատար գըտնըլող և ֆէրիգութեան աստիճանը ունեցող Եուսուֆ փաշային՝ այս կողմը պատահած գործքերը կարգի դնելու համար՝ նախարարներուն խափու քէհեասի գտնըլող խօճէկեաններէն Քիւնամ էֆէնտին՝ իրեն խափու քէհեասի ըլլալուն խնդիրք ըրեր է. և Արքային հրամանաւ՝ նոյն փաշային խնդիրքը կատարվեր է։

Սէլանիկի երևելիներէն և արքունի դրամի խափուճի պաշըներէն Եուսուֆ սատըգ պէյը՝ որ Արքային գահընստած ժամանակը շնորհաւորելու համար Կոստանդնուպօլիս եկեր էր, և հիմակ ալ Սէլանիկի մուհասըլ է. թէ անոր և թէ Ջըխնայի մուհասըլ Սիւլէյման աղային՝ միրախօրութեան աստիճանը, և էվգաֆի գանձարանին զիմմէթճիյի ընկեր եղող Ատըֆ պէյին ալ խօճայութեան նշանը Ինքնակալին հրամանաւը շնորհեցաւ։

Արքունի դրամը խափուճի պաշըներէն և տէրութեան համատարիմներէն Սամագօվճուգ նազըրի Փէրհատ աղայն, և նախարարներէն համի Սաիտ էֆէնտին, Գահիր սէլամպէյ էֆէնտին, և անոնց որդերը Սէյիտ Մէհէմմէտ աղըֆ պէյը՝ Սաատէտտին պէյը, մալիյէի գանձարանը վարիտաթ մուհասէպէճի Հիւսէյին Թահսին էֆէնտին, մասարիֆաթ մուհասէպէին գլխաւորներէն արքունի ախոռին մուգայեսէ ըսված գործին մէջ գտնըլող Սէյիտ Մէհէմմէտ Նուրի էֆէնտին, ասոնք գիտուն և բանիբուն ըլլալնուն համար՝ Փէրհատ աղային բէքխալի խափուճի պաշըութիւնը, միւսներուն խօճայութեան աստիճանը, Նուրի էֆէնտիին ալ խօճայութեան նշանը տըրվելուն Ինքնակալէն հրաման ելաւ, և ամէն մէկին վկայական գըրերը շնորհեցաւ։

Բըղտա պազարի ըսված տեղը պէքէարի օտաներուն մէջը բնակող Հասան անունով մարդ մը՝ Ֆըրէնկի և ուրիշ գարշելի ախտերուն դեղ կընամ շինէր ըսելով, քիմեայով իլաճները որ արգելված է բոլորովին, պազըներուն տալը թէև լըսված էր, հիմակ ալ թիւլպէնտճիներուն քէհեայ համի Մէհէմմէտ աղային ալ Ֆըրէնկի ես եղեր ըսելով՝ սիւլիւմէնլի և ճիվայով շինված հապեր տալով Մէհէմմէտ աղային մեռնելուն պատճառ ըլլալը՝ բժշկապետին կողմանէ յարքունի դուռը խապար տըրվելուն համար, պատժոյ արժանի Հասան միսաակար մարդը Պրուսա աքսորվեր է։

Ասոր այսպիսի տգէտները բժիշկ եմ ըսելով՝ պազըներուն վնաս կը հասցընեն, բայց մեր Ինքնակալին բարի դիտաւորութիւնն ալ հասարակութիւնը ասանկ վտանգներէն ազատ մնալու համար ըլլալով, բոլոր բժիշկները՝ բժշկաց ժողովին մէջը աղէկ մը փորձըվելէն և քննըվելէն յետոյ՝ պէտք եղած կարգադրութիւնը պիտի հաստատվի. և այս որպիսութեանը վրայ հիմա նոյն ժողովին մէջը հարցմունքներ ընելով՝ կատարումը տըրված կերպը՝ Լրոյ գըրերուն մէջը գըրվիլը արժան է։

Զիլհիճճէի ամսոյն 22 էն մինչ 'ի մուհարրէմի 15 օրը սև՝ և Սպիտակ ծովէն՝ տաճկի և րաեաի և Ֆրէնկի և քէօրֆէզի նաւերովը Կոստանդնուպօլիս եկած ղահրէները և ուրիշ բաները ներքևը կը յայտնըվին։

| | | |
|---|---|---|
| Ցորեն | Քիլէ | 118193 |
| գարի | | 038160 |
| գօգօրօզ | | 020000 |
| խապլըճա | | 000530 |
| քէթէն թօխումի | | 000450 |
| Ալիւր | Չուվալ | 001053 |
| պուլղուր | | 000096 |
| պրինձ | | 001627 |
| եափալի | | 000067 |
| Ապայ | Տէնկ | 000084 |
| կտաւ | | 000044 |
| խումաշ | | 000008 |
| ալաճա | | 000008 |
| իբէկ | | 000202 |
| խամ բամպակ | | 000291 |
| դէրձան | | 000070 |
| թիֆթիկ | | 000250 |
| գիլիմ | | 000022 |
| քէչէ | | 000046 |
| պալմուտ | | 000003 |
| Խումաշ | Արշուն | 000002 |
| Խամ տէրի | Խանտար | 000580 |